

րը, մտավաճառները, ուրիշները չենող և ծախողները թուրք են: Հայերը պարսկական են վաճառականութեամբ և արհեստներով: Համարեա բոլոր դերձակները հայեր են: Շամախին ինքն արդիւնաբերելու բան չառ չունի, բայց կենտրոն է համարվում գիւղերի արդիւնաբերութիւնը թագու հասցնելու գործում: Կարելի է ասել, որ բազմապէս դիւղական արդիւնաբերութեան վաճառանոցը թագուն է:»

Մեր թղթակցը ՎԵՐԻՆ-ԱՊՈԼԻՍԻՑ գրում է մեզ: «Երկրպագու մեր հասարակութիւնը բաւական գրգռված գրութեան մէջ է գտնվում և այդ մի ուսուցչի պատճառով: Այժմ ամենայնպէս միջոցն է, երբ պ. Օ. Լէրիսէ մեծ աշխուժեամբ կը կարողանաւ այս մեր «Երբայրաբերութեան երկրի» քաղաքակրթված բնակիչների մասին լաւ փաստեր ժողովել: Միայն ցատում ենք որ այս րօպէիս պարոնը մեզ մօտ չէ, որ ինքն աչքով տեսնի թէ որքան և զբաղւած էր են ազգայնացի: Նա կը համոզվէր, որ մեր ազգայնացիներն մշտական մղովմունքի, միմեանց վիրաւորելու, երկպառակութիւնների, անհաշուութիւնների, ետեւան կրքերի և այլ ամեն տեսակ ալիւնդակ յատկութիւնների կրեան հանելու պատճառ է տալիս ուսումնարանը, իր հոգաբարձուներով և ուսուցիչներով:»

Շնորհակալութեամբ ստացանք պ. Արթուր Լէյստի երկու հատորներ քերականութեան լեզուով «Armenische Bibliothek» վերնագրով: Առաջին հատորը կրում է «Drei Erzählungen von Raphael Patkianian», իսկ երկրորդը «Litterarische Skizzen» վերնագրով: Գրքերի հրատարակիչը Արգար Թովմանիսեանն է և գրքերը տպված են Լայպցիգում: Խաղաքանչիւր հատորը 75 կօպէկով ծախվում է թիֆլիսում, Կենտրոնական գրադատականութեամբ:

Այժմ, երբ որ խօսեանք արդէն մտել է Աւստրո-Ռենգարիա, երբ Պետերբուրգ, Օդեսա և ուրեւայ մի քաղաքներ ամեն տեսակ նախազգուշացնող միջոցներն են ձեռք առնում անկող և սարսափելի հիւրեր արգելելու պետութեան սահմանները մտնելու, մեր թիֆլիս քաղաքը շարունակում է քաղցր ընտել և կարծես դիտմամբ աւելի էլ կերտում է պահում իր փողոցները, բազմերը և արտաքինները, չը նայելով որ նաւազնացութեան միջոցով որ ամենալաւ փոխադրիչ է խօրհայի, այդ անտը շատ հեշտութեամբ կա-

րում, որ վնասից չաւելի ոչինչի պատճառ չէ դառնում ապրանքատիրոջ: Այս տարի մի վաճառական, անցեալ տարվայ փորձից խրատված, անձամբ է բերում թափում իր գնած ցորենը, և յաջողում է մի լաւ գնով վաճառել մի յոյն վաճառականի վրա: Կոմիտեները խմանալով այդ, անմիջապէս յայտնվում է այնտեղ, որտեղ յոյնը պէտք է ցորենը ընդունէր և առաջարկում է նրան սպասել մի երկու ժամ, որից յետոյ ինքը կը կարողանայ աւելի ավան գնով, նրանից էլ լաւ ցորեն տալ: Մի և նոյն ժամանակ պախարուկում է խնդր հայ վաճառականի ցորենը գնաւազան պակասութիւններ ընկելով նրա վրա: Պարոնի այս ցած քսութեան չորհրդի առաջախնդր է և մնում խեղճ հայը այնքան նեղումն է դրվում, որ այնուհետև ստիպված է լինում պուզումը 10 կ. պակասով ծախել և ընակաբար շահելու տեղ վնասվել: Հայը հային է վնասում և յոյնը ծիծաղելով երկուսի վրա էլ—օգտվում է: Եւ ինչպէս այդ բոլորը, որպէս զի հայ վաճառատները չը համարձակվի միւս անգամ անձամբ բերել ապրանքը, այլ շարունակէ ուղարկել, ըստ առաջնոյն, կոմիտեները վրա:

Բանանք մի այլ էջ: Կոմիտեները պարոնը չէ կարող հանդուրժել, որ մին իր ընկերակիցներից աւելի յառաջ գնայ: Նա իր ցած նախանձը այնքան առաջ է տանում, որ նոյն վրա չէ դադարում հազար ու մի քսութիւններ անել. ամենայն օրինաւոր (?), ապօրինաւոր միջոցներով ճգնում է իր ընկերակիցների վրա գնաւազան մատուցութիւններ անել: Նոյն քաղաքում վաճառատներին գրում է գնաւազան նամակներ, որի մէջ այս կամ այն կոմիտեների վրա ծանր մեղադրանքներ բարդելով ճիգ է թափում համոզել, որ այսուհետև ապրանքը իր անունով ուղարկէ: Գուցէ ներկայ յօդուածը կարգադրողների թւում էլ գտնվին և այնպիսիներ, որոնք ստացած լինեն զրա նման նամակներ և եթէ չեն սխալվում, շատերը նրանցից,

որոնք համեմատելի և փոքր, իսկ այդտեղից և թիֆլիս: Բայց չը նայելով այդ տեսակ վտանգին, թիֆլիսի փողոցները աւելի կը կերտու և, քան որ և է ժամանակ: Երեկ անցնելով քաղաքի ամենախիտաբերական փողոցներից միում, գրեթէ ուղիղ զաւառական բժշկի բնակարանից ոչ հեռու, միմեանցից 25 քայլ հեռաւորութեամբ ընկած տեսանք երկու ստակած կատուների լէշերը, որոնք արդէն իսկույն, անկարգաբերի դարչահոտութիւնն էին արձակում: Իսկ թողը և ձիաների ու մարդկանց աղբը փողոցների նոյն իսկ որոտաւորների կողքին, շատ սովորական բան ենք համարում: Մեր քաղաքային վարչութիւնը ոչ թէ միջոցներ է գործ դնում խօրհայի մօտեցն արգելելու, այլ կարծես դիտմամբ ամեն միջոց է գործ դնում այդ անխի մի քաղաքը մանկուհի նպաստելու:

Այս օրերս խմանք մի տխուր լուր. թիֆլիսում սկսում են յայտնվել կատաղած շներ: Քանի մի օր առաջ գրաւածաւ Սեմանցին և նրա խօսակից մի օֆիցէրին կից մազադիւնի առջև անցնող մի շուն, որ բժշկական քննութեան ենթարկվելուց յետոյ կատաղած յայտնվեցաւ: Թէպէտ Ս. և թէ օֆիցէրը, անմիջապէս ուղարկեցան բժշկվելու համար Օդեսա, որտեղ հիմնված է Պետերբուրգի հիմնարկութեան նման ջրվախութեան թոյնը պատուաստող մի հիմնարկութիւն:

Կովկասեան Բարեկործանական ընկերութեան խնդիրով այս օրերս տարածեցինք «Բարեկործանական ընկերութեան հաշիւը» վերնագրով բրօշուրները «Մշակի» թիֆլիսի բոլոր բաժանորդներին:

Ամիս 16-ին, թիֆլիսի հայթիւնների համաքաղաքային ժողովում, գումարային խմբովին ուրախութիւններ անելուց յետոյ, ժամի 8-ին եկաւ և կանգնելով բնակարանի մէջ և ուղարկելով զինքը, որը գտնվում է Բաղադրային փողոցի վրա, զինուորական դատարանի տակ, սկսեց զուռնա ածել և ուրախանալ: Փողոցի վրա այդ ժամանակ հաւաքվեցաւ մեծ բազմութիւն և ուրախութիւնները աղմկով կերպարանք առան, որից յետոյ տեղի ունեցան մի քանի շփոթութիւններ. համաքաղաքային համար անապասելի կերպով կուր պատահեց մի զինուորականի հետ խաղաղութիւնը վերականգնելու համար եկան ստորկաններ և կօղակներ: Խառնակութիւնների պատճառները ընդհատվում են:

որոնց ուղղված են այդպիսի քուռ նամակներ և ոչ իսկ պատասխանի են արժանացրել պարոն գնաւառատներին:

Իսկ եթէ ընթերցողը թող սոյ մեզ, մենք կը պարզենք և մի այլ էջ, որ անհամեմատ գերազանցում է առաջիններին:

Տեղւոյ մի հայ վաճառականութեան տան ներկայացուցիչ պ. Ղ. պայման է կապում մի գերմանացի պ. Բ. հետ, որ կօմիտայով վերջինիս համար ցորեն առնէ, ըստ որում և բաւական քանակութեամբ առնում է և յանձնում է գերմանացի վաճառականին: Մեր համալաւոր կօմիտեները փոխանակ ուրախանալու որ շահվում է մի հայ վաճառականի և նրա շնորհիւ պիտի օգտուին և մի քանի հայ ընտանիք, ընդհանրապէս զնուծ է նու ուղղվել պ. Բ. մօտ և ամեն ճիգ թափում է, որ պ. Ղ. իր վրէջ այդ գործից: Իսկ գերմանացին, որ ի հարկէ իրան զիտող հայի նման, թեթեւաբար չէ, բոլորովին ուշադրութիւն չը դարձնելով ճանապարհ է ցոյց տալիս նրան: Գրանով չէ յուսահատվում մեր հերոսը, կրկին գիտում է գերմանացու մօտ և պ. Ղ. վրա այլ և այլ պակասութիւններ բարդելուց յետոյ, իբրեւ իրան, պ. Բ. օգտին նախանձախնդիր, առաջարկում է նրան փոխանակ հայ Ղ. մի ծանօթ հրէայ միջոցով վ. ին, որ իբր թէ լաւագոյն և աւելի հաւատարմաբար կարող է եղել կատարել պ. Բ. գերմանացու տուած ցորենի յանձնարարութիւնը: Բայց բարեբաղդաբար խելացի եւրօպացին նրա վրա ցուրտ ջուր անելով ճանապարհում է և ասում. «Պարոն, չը գիտեմ դուք ինչ էք այդքան հոգում: Ես պ. Ղ. ից լաւի օգուտ, ոչինչ չեմ տեսել մինչև այսօր, ինչպէս պէտք է նրանից գործը ետ առնեմ և յանձնեմ ուրիշին»: Եւ ծիծաղում է իրաւամբ, հայերի վրա, որ միմեանց զէմ այդ աստիճանի ցած խտրիւններ են լարում, յօդուած մի երրորդ անձնաւորութեան, այն էլ հրէային: Ահա այդպիսի գործողութիւնների շնորհիւ,

Մայրաքաղաքների ուսուց լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական ֆակուլտետում հիմնվում է բուզաւաւա կան օրէնսդրութեան նոր բաժանումը: Արեւմտեան Եւրօպայի պետական օրէնսդրութեան բաժանումը փակվում է:

«ЭКОНОМ. ЖУРНАЛ» ամսագիրը հաղորդում է հետեւեալ թիւը Պետերբուրգի բաժնակի մշակութեան մասին. 1882 թիւին ստացված է բաժնակ 6 հազար պուր, 1885 թիւին—20 հազար պուր, իսկ 1886 թիւին սպասվում է մինչև 100 հազար պուր:

Ամիս 15-ին թիֆլիսի քաղաքային դումայի նիստը չը կայացաւ, անդամների օրինական թիւով ներկայ չը լինելու պատճառով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՍՊԱՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՆԸ

Միջին դարերում արաբները, որոնք նուաճած էին ամբողջ Սպանիան, կերպարանափոխել էին այդ երկրի հարաւային մասը մի կատարեալ դըրախտի: Ամեն տեղ առաւորութեամբ ջուր մատակարարող ջրանցքներ էին շինել և ամբողջ երկրի ծածկվեցաւ պտղատու, գեղեցիկ այգիներով: Բացի սրանից, արաբները հիմնեցին Սպանիայում բազմաթիւ ֆաբրիկաներ և արհեստանոցներ, որտեղ գործում էին գլխաւորապէս ապրիւնի կերպաներ, պատրաստում էին կաշուց անման առարկաներ, շինում էին այլ և այլ մետաղներից զարմանալի ճարտարութեամբ և արհեստով զանազան իրեր: Երեւելիներ: Բարդելներ, Բուրգոսի և Վալադօլիդի վաճառանոցները գրաւում էին Եւրօպայի ամեն երկրներից բազմաթիւ վաճառականներին. այդտեղ, բազմամարդ վաճառանոցներում և տօնավաճառներում, ծախվում էին Տօլէդօի ապրիւնի մեղէններն ու կաշուեղէնները, Կորդօպայի սկիւղած կաշու ապրանքները, Վալենցիայի ապրիւնի մեղէնները, կատալոնիայի բուրգեայ գործածները, Սեգովիայի և Կուէնցայի կտակեղէնները և Մէդիւայի, Վալադօլիդի, Ալիլայի բազմաթիւ ու բազմատեսակ ապրանքները: Նոյն վաճառանոցներում փոխանակում էին ցորեն, աղ, գինիներ, սափրան, այլ և այլ միջնաքաներ և թանկագին քարեր: Միմիայն Սեվիլայի արհեստանոցներում

օտարների առջև հայի վարկը հետզհետէ ստորանում է: Ինչքան ուրեմն իրաւունք ունի «Մշակի» խմբագիր պ. Արթուրին, փակագծի մէջ ասելը, «Բարոյականից դուրի ազգեր» վերնագրով ստաշնորդները գրելու դեռ ևս մեր մասին:

Ի նիստի ունենալով վերոգրեալ պարագաները, որոնք ոչ մի կերպով միթաբական չեն կարող համարվել հայ վաճառականի համար, մենք անհրաժեշտ ենք համարում սրանց ամենախորին ուշադրութիւնն հրաւիրել գործերի այս դրութեան վրա: Արեւմտեան հայի արմիտ վաճառական է, հնարագէտ է և կը յառաջանայ, բայց որտեղ է մնում նրա օրաւաւութիւնը, հնարագիտութիւնը, երբ իրանը միշտ պարզ գործակատարի երկրորդական դեր են կատարում օտարների առաջ, նոյն իսկ իրանց սեպհական արդիւնաբերութեան խնդիրները: Միմեանց զէմ խտրիւններ լարելով, շարունակ միմեանց զէմ քսութիւններ անելով, շատ կը յառաջանան հայերը: Եթէ ճարպիկ են թող մրցեն յոյնի, հրէայի կամ եւրօպացու հետ, փոխանակ ճնշելու աղաքակից մանր վաճառատներին, որոնք առանց այդ էլ արդէն ճնշված են... Եւ եթէ իրերը շարունակվին մնալ այսպէս, մարդարէ լինել հարկաւոր չէ, գուշակելու համար թէ ինչ կը լինի հայ վաճառականութեան ապագային: Խիստ մօտ ապագայում օտարները կը լընջվին կովկասի բոլոր գիւղերում, անձամբ կը հաւաքեն ապրանքը գիւղացիներից և անձամբ արտահանելով, այս սկզբնական վաճառաւաճութիւնից էլ կը զրկեն հայերին, և այն ժամանակ այս վերջիններին ուրիշ բան չի մնայ անել, եթէ ոչ կարգաւ իրանց զինքն կերպարան օղբեր, որոնք, սակայն չեն կարողանայ վերականգնել կործանեալ կրօնապաշտը: Բայց մարդ աղամայ հարց է տալիս իրան. ինչպէս պէտք է պատահին այս բոլորը: Միթէ Բալթիկում կօմիտեները չի կարող այնքան օրինաւոր լինել, որ հաւատարմութեամբ ծառայէ իր վրա ապրանք ուղարկողի շահերին,

բանում էին արաբների ժամանակ աւելի քան 100,000 բանաւորներ: Կորդօպայ քաղաքը իններորդ դարից սկսած մինչև տասն և երկրորդը, ունէր մի միլիոնի չափ բնակիչներ և նրա 22 թաղերը տարածվում էին շրջակայ դաշտերի վրա: Գրանաւա քաղաքը Կորդօպայից յետոյ, ամենախիտաբեր քաղաք էր համարվում ոչ թէ միայն սպանիական թերակղզու վրա, բայց ամենաքաղաքամարդ և ամենապահպան թաղանթներից մին ամբողջ Եւրօպայում: Ժամանակակից սպանիական առաջը, որ երկար մնաց ազգի յիշողութեան մէջ, ասում էր. «quien no ha visto Granada, no ha visto nada (ով չէ տեսել Գրանաւա, ոչինչ չէ տեսել):»

Նրբ արաբները աքսորվեցան Սպանիայից, այդ երկրի արհեստը և արդիւնաբերութիւնը հետզհետէ սկսեց ընկնել: Գործունէութիւնը ամեն տեղ դադարեց, արհեստանոցներն ու գործարանները փակվեցան, ամենախիտաբեր և արդիւնաբեր քաղաքներ, ինչպէս օրինակ Սեվիլիա և Տօլէդօ գրեթէ ամայացան: Հետզհետէ կորան, անհետացան արհեստները, հոռու արհեստաւորների պակասութեան պատճառով, հանքերը այլ ևս անմշակ մնացին:

Սպանիայի թշուառութեամբ թիւ չը նպաստեց կաթօլիկութեան մոլեռանդութեան ծնունդ ինչպէս զի զիցիան, որ անողորմ կերպով ոչնչացնում էր, քստում էր երկրից անհասարակ անուանված միւր և ընդունակ աշխատողներին: Ինչպիսիքիւն աւելի պատրաստ էր ամբողջ Սպանիայի ազգաբնակչութիւնը ոչնչացնել, քան թէ թողնել նրա մէջ մի հատ հերետիկոս:

Մի գեղեցիկ օր սպանիական կառավարութիւնը ուղեց նորից բարձրացնել երկրի ընկած արդիւնաբերութիւնը, նորից ծաղկեցնել արհեստները: Բայց փոխանակ խելացի, դաւանա միջոցների դիմելու, սկսեցին դիմել արուեստական և ճնշող միջոցներ, որոնք փոխանակ երկրի հարստութիւնը բարձրացնելու, աւելի էլ վնասեցին երկրին և տնտեսական յետին թշուառութեամբ հասցրին նրան: Այդ միջոցներն էին. մաքսեր, նոյն իսկ երկրի նահանգների միմեանց մէջ, հազար ու մի արգելքներ, ինչպէս, օրինակ, արգելք օտար երկրներից ծախվող կամ ցաւաքով որ և է արգելքների Սպանիա բերելը, արգելք սպանիական կրօնիւններին (զաղթականութիւն) այս կամ այն բնական բերքի մշակելը, ինչպէս վաղը, ձիթենի, կտաւատը և այլն, որպէս զի զաղթականութիւնները չը կարողանան մրցութիւն անել իրանց արդիւնաբերութեամբ մայր-երկրի հետ: Այդ սխալ և անճշուն տնտեսական քաղաքականութիւնը,

որով թէպէտ իր կողմնակի շահերը կը պակասին, ճիշտ է, բայց նրա փոխարէն նա կը շահի վաճառատների վստահութիւնը և աւելի կը տայ հայոց վաճառականութեան ընդարձակման թողլաւ գիտնան և լաւ համոզվին մեր վաճառականները և կօմիտեները, որ մինչև նոյն անձնական նեղ ասպարէզից, եսական ցած շահախնդրութեան շրջանից չը դուրս գան, չեն կարող գծի չափ առաջանալ, դեռ թողնենք շարունակ ետ մնալու պարզ հաւանականութիւնը:

Միթէ հայ վաճառականը այնքան անկարող է, որ նախ իսկ իր երկրում չէ կարող մրցել օտար եկաւորների հետ: Գործի արտահանութիւնը այժմ հետզհետէ աւելի մեծ դեր է գրաւում յոյն իսկ նաւթի գործը: Միթէ վերջ ի վերջոյ պիտի թող տան, որ ինչպէս նաւթային արդիւնաբերութիւնն անցաւ օտարների ձեռին, այդպէս էլ պիտի լինի և ցորենի հետ: Բայց ինչպէս Միթէ հայ վաճառականը չէ կարող ունենալ իր սեպհական գործակատարները, կամ սեպհական ընկերը եւրօպական գլխաւոր վաճառատներին, որոնք իրանք արտահանէ և առիթ չի տայ օտարին իր անհարակութեան վրա ծիծաղելու: Թող վերջապէս կովկասի առաջնակարգ հայ վաճառականները զարթնան թմրութիւնից և զօրաւոր կերպով իրանց ձեռին առնեն ցորենի և առհասարակ հաջահատիկները առևտուրը, փոխանակ մի քանի հասարակ առարկաների վրա չարչիութիւն անելու: Եթէ ոչ, բոլորովին տարակոյտ չը կայ, որ շատ չի տեղ իրանք էլ մանր վաճառատները նման խաղաղից կը դառնան մի որ և է բաղադրանքը հրէայի կամ յոյնի ձեռին և իրանց սեպհական հաշուով կը հարստացնեն նրանց:

Գիտ ունենք վերջապէս, որ մեր այս յօդուածը ուշադրութեան կառնուի:

փոխանակ երկրին օգուտ տալու, ընդհանրապես ամենամեծ զիջումներ հասցրեց նրան և վերջի վերջոյ իսպառ աղքատացրեց և աւերեց երկիրը: Այդ ժամանակամիջոցում կառավարութեան անհոգ քաղաքականութեան պատճառով երկրի աղքատացումը հետզհետէ աղքատացաւ և թուով սկսեց նուազել: Սպանիայի աղքատացումը ընդ 10 միլիոն հոգուց իջաւ մինչև 6 միլիոն, ամբողջ քաղաքներ աւերվեցան, ամբողջ գաւառներ ամառացան: Կատալոնիայի գիւղերի երկու երրորդականը բնակչւնրից զրկվեցան, Էստրամադուրա նահանգը անապատի նման դարձաւ, Անդալուզիայում, ուր արարների ժամանակ հաշուով էին 20,000 քաղաքներ ու գիւղեր, այժմ ճանապարհորդելու ժամանակ վեց, տաս ժամվայ տարածութեան վրա մարդը մի հատ բնակութեան անգամ էլ չէր հանդիպում: Իսկ Սեգովիայի մի գաւառը այն աստիճան ամառացաւ և իր ամբողջ աղքատացումով ինչպէս զրկվեցաւ, որ ժողովրդի բերանում ստացաւ des poblado (անմարդաբնակ) անունը:

Կաթիլի կղերի ֆանատիկութիւնը, ինկվիզիցիայի ձեռքով, շարունակում էր դարերի ընթացքում իր աւերման գործը: Սպանիայի հողից աղքատում էին աշխատատեղ արարները, տանջանքների ենթարկվում, զլխատվում, սպանվում էին այն ամեն անձինք, որոնց վրա փոքր ի շատէ կասկած էր ընկնում զօրեղ հոգեւորականութեան ընդդիմադրութեան մէջ: Հոգեւորականութիւնը, կամ աւելի լաւ է ասել կրօն ապետութիւնը հետզհետէ աւելի հզօրանում էր և ամբողջ երկրի վրա տարածում էր իր երկաթեայ ազդեցութիւնը: Սպանիայի հողի վրա հիմնվեցան հետզհետէ աւելի քան 9,000 վանքեր, հոգեւորականութիւնը իր ձեռքը դրեց երկրի հասարակական, պետական, քաղաքական, ընտանեկան և ուսումնական կեանքի բոլոր ճիւղերը: Հոգեւորականներն էին կառավարում ամբողջ երկիրը, հոգեւորականներն տիրում էին և պալատին ու թագաւորների անձնապաշտպաններին, նրանք էին տիրում և զօրքի վրա: Բոլորը միախառնվեցաւ, և Սպանիայի պատմութիւնը դարերի ընթացքում ներկայացնում էր տարաբնույթ բարոյական հակասութիւնների մի չեղած պատկեր, խաչ և խանձր, թոյն և աւետարան, եկեղեցի և կաթաղան, ինկվիզիցիա քրիստոնէութեան անուանով և պալատական սպանութիւններն ու զինուորական ապստամբութիւնները (pronocimiento), այդ բոլորը դարերի ընթացքում ձեռք ձեռքի տուած էին ընթանում:

Երկար ժամանակ անշարժ և ճնշված, միշտ ենթակայ ներքին խռովութիւնների, Սպանիան միայն այն դարի առաջին կեսից սկսեց փոքր ի շատէ շուրջ քաշել: Միայն 1865 թվականից սկսեցին մուտք գործել այդ ժգրադէ երկրի կեանքի ու քաղաքականութեան մէջ փոքր ի շատէ աղաւաղող ժամանակակից գաղափարներ, այդ թւականից սկսեցին մուտք գործել և աւելի աղաւաղող ու խելացի հայեացքներ երկրի անտեսական քաղաքականութեան մէջ: Հրատարակվեցաւ մի վերջնական հրաման, որ ողջացնում էր մաքսատների գոյութիւնը Սպանիայի այլ և այլ նահանգների սահմանադրւններում, թէն այդ մտքով առաջին կարգադրութիւնը հրատարակվեցաւ դեռ 1820 թվին, սակայն չէր ողջացնել: Այլ և այլ արգելումներն ու արտոնութիւնները: Միայն 1865 թվին սպանական կառավարութիւնը անկեղծ կերպով վերադառնալով սկսեց առևտրական ազատութեանը, այդ թվականից թույլ տրվեցաւ օտար երկրներից հացահատիկների ներմուծումը, հրատարակվեցան մաքսային տարիքների մշտական գները, թույլ տրվեցաւ ներմուծել Սպանիա ամեն տեսակ արդիւնքներն ու բերքերը, բացի կաթէից, շաքարից և օղիից: Վերջապէս, նորերում, այն է 1882 թվին հրատարակվեցաւ մի նոր օրինագիծ որ սահմանում էր մի ընդհանուր և անհաշտ, բայց հաստատ սակագներ օտար երկրներից բերվող արդիւնքների համար, իսկ 1883 թվին Սպանիան առևտրական դաշնագրութիւններ կապեց Ֆրանսիայի, Աւստրո-Ունգարիայի և Բելգիայի հետ, հետեւեալ տարին Գերմանիայի, Իտալիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի և Շվեյցարիայի հետ: Վերջապէս երկու ամիս սրանից առաջ Սպանիան կապեց և Անգլիայի հետ մի տեսակ առևտրական modus vivendi, մի առևտրական դաշնագրութիւն:

Առևտրական և տնտեսական այն չինական պատիւ հետզհետէ վերացվելու միաժամանակ, վերացվում էր և բարոյական ու մտաւոր չինական պատը, որով իրան դարերի ընթացքում

պատել էր Սպանիան դրսի աշխարհի ամեն տեսակ ազդեցութիւնից:

Թէն ժամանակ առ ժամանակ կրկնվում էին զինուորական ապստամբութիւններ և իր իսկական դերը չէր ճանաչող, ամեն զինացիլինա, ամեն կարգապահութիւն կորցրած, հեշտ կաշառվող, վարձկան զօրքը շարունակում էր քաղաքականութեան մէջ խռովել, ինչպէս 1869 թվին գահընկեց անելով Իզաբելա թագուհուն և հանրապետութիւն հրատարակելով:—բայց այդ ահա կամ վաղահաս հանրապետութիւնը երկար չէր տևելով հետզհետէ աւելի և աւելի սկսեցին ազդի և պետական կեանքի մէջ մուտք գործել աւելի հաստատ, հիմնաւոր, զգոյշ և խելացի սահմանադրական պրինցիպները: Այժմ Սպանիան իր հասարակական, ուսումնարանական, տնտեսական և քաղաքական կեանքի ամեն ճիւղերում ջանում է հաւասարվել ընդհանուր եւրոպական բարձր կուլտուրային, յետ չէ մնալ Եւրոպայի քաղաքակրթութեանը, որից նա դարերի ընթացքում շատ և շատ յետ էր մնացել:

Երկրի ընդհանուր առաջադիմութեան ազդեցութեան տակ շահվեցաւ Սպանիայի արդիւնաբերութիւնն էլ, որ սկսեց հետզհետէ առաջանալ և ծաղկել: Յաջորդաբար ինքնելով մաքսերի ասակազինը դրսից բերվող ապրանքների համար, կառավարութիւնը այն հետեանքին հասաւ, որ ամենայն քաղաքների երկրի բնիկ արդիւնաբերողների եւտանդն ու ջանքերը: Մարտային սակագնի հետզհետէ պակասելը խթան եղաւ Սպանիայի արդիւնաբերողների կրկնապատկել իրանց ուժերը, մշտնջենլ իրանց արհեստանոցներում ամենակատարեալ մեքենաները և գործադրել գիտութեան ու տեխնիկայի ամենամեղմը զիւտերը: Եւ նրանք հասան ճշմարիտ սրանշէի հետեանքներին, սպանական մի լայն արդիւնաբերութիւնները մերցում են այս րօպէիս եւրոպական միւս երկրների արդիւնաբերութիւնների հետ թէ իրանց կատարելութեամբ և թէ էթանութեամբ:

Այժմ անցնելով օրինակ, կատալոնիա նահանգի արդիւնաբերութեան մեծ կենտրոնները, մարդը սրանշանում է արհեստանոցների տեսքով, նրանց եւտանդն գործունէութեամբ և արդիւնաբերած ապրանքներով: Նշանաւոր են մանաւանդ կտաւի և չիթի գործուածները, որոնք ողջով պակաս չեն Եւրոպայի և Ամերիկայի երկրների նոյնանման գործուածներից: Սպանիայի 9/10 այժմեան աղքատացումը, գործ է ածում իր պէտքերի համար տեղական արդիւնաբերութեան այլ և այլ գործուածներ, մանաւանդ տեղական կտաւերէն: Ներս ու չիթիները, որոնք ողջով չեն ջոկվում օտար երկրների նոյնանման գործուածներից, ոչ իրանց ամրութեամբ ու արժանաւորութեամբ, ոչ իրանց նրբութեամբ, զոյնեցում, զիւնացողութեամբ ու նկարների գեղեցկութեամբ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՔԻՍՏԻՑ

Կ. Պոլս, 9 սեպտեմբերի

Այն ժողովուրդն որ սակաւաթիւ յանցաւոր ու դատաւարանալ կարտադրէ ի հարկէ բարոյապէս շատ դարգացած կը համարուի: Ուրեմն ծափահարենք մինչ մեզի, Պոլսոյ հայը կրնան նախանձել ի հանդիսանալ թէ ինչպէս պատմենք:

Նախորդ նամակաւ մը գրած էի թէ խառ գիւղի թաղական խորհուրդը առ ոտն կիսելով ազգային օրէնքները ասորէն վկայագիր մը տուած է ժառանգական խնդրոյ մը մէջ, և թէ կառավարական դատարաններն այդ վկայագիրն ի ձեռն ունենալով միջամտած են մեր կրօնական և ազգային գործերու մէջ: Այժմ Պատրիարքարանը պատժեց այդ թաղական խորհուրդը և նորա Ատենապետն, Ատենապետն ու Գանձապետը որք մեղադարտ էին, պաշտօնանկ եղան և դատաւարտուեցան բնաւ պաշտօն չը վարել երեք տարի: Ի հարկէ այս վճիռը գործնականութիւն պատժուեց ընդհանրութեան: Բայց այս առթիւ լրազանն էր ինչպէս թէ թերեւս առաջին անգամ է, սահմանադրութեան հաստատութիւնէ ի վեր, որ ազգային պաշտօնեայնք կը դատաւարտուին Պատրիարքարանի կողմանէ: Մէկ քանորդ դարու մէջ մի կամ երկու անգամ պատահին յանցաւորներ: Միւլթարական չէ միթէ: Միայն թէ մեր կարծեք ազգային դատարանները շատ անգամ այնքան բարեխիղճ կը լինին որ իրենք իրենց կը պարտաւորին ըսել թէ մեր մէջն արդար թող նախ քարը նետէ մեղաւորին վրայ:

Վանայ խնդիրն որ վերջացած կը համա-

րուի տակաւին վերջացած չէ և որքան հետամուտ լինինք այնքան աւելի զայրոյթ մը կը գգանք ընդդէմ մեր ազգային այն պաշտօնէից որք չըսենք իրենց ապիկարութեամբն, այլ իրենց չարամտութեամբն այդպիսի փորձանքներու կը հանդիպենք: Թրքա-Հայաստանի նշանաւոր գաւառներէն մին: Պոլսոյ կաթիլոյտ մեկնած է բայց իւր հոգին կը ծածանի Վանայ վրայ: Քաշուած լիմ անապատն, ունենալով իւր տրամադրութեան ներքե վանքին եկամուտները կը խաղալ ինչ գեր որ ուզէ: Վան հանդարտած չը համարուի: Քաղաքական և կրօնական ժողով մը, ընտրուած թիւը կառավարի մը պիտի մատակարարէ ազգութեան գործերը: Կարելի է երեւակայել որ Սահմանադրութեան հաստատութեան 27-րդ տարին ունենանք կրօնական ժողով մը, ընտրուած մահմէտական բաշայէ մը: Թող ցնծան Յարութիւն Պատրիարք և Նուրեհան: Եղեւութիւնը այս է: Երբ Պատրիարքարանը կը հարկադրուի, կը բռնադատուի գոհն իւր սրտին սիրելի Պոլսոյ, իբր թէ ժողովուրդը հանդարտեցնելու համար, Վանայ կուսակալը կերթայ Առաջնորդարան, և անդ առանց ուշադիր լինելու ժողովուրդի օրինաւոր պահանջմանց կընտրէ կրօնական և քաղաքական առժամանակեայ վարչութիւն մը: Վալի բաշան կը յայտարարէ թէ ինքն արտօնութիւն ստացած է Պատրիարքարանէն ընտրել այդ մարմիններն: Ժողովուրդը կը պահանջէ որ Վալի բաշան ցոյց տար իւր փոխանորդագիրն: Բայց միթէ կառավարի մը ստու կը խօսի: Ընտրութիւնները Վալին կը կատարէ և առ ժամ հանդարտութիւն կայ: Բայց ժողովուրդը դժգոհ է: Պոլսոսն թէ Վալիոսեան ըլլան նորընտիր ժողովականք չեն այն անձինք որք ժողովուրդը կը սիրէ: Այն անձինքն են, որքան հանդարտութիւն կայ, այնքան և աւելի ալ դժգոհութիւն:

Սակայն վանքից մեծ յոյսեր ունեն թուրքիոյ նորընտիր դատական գործոց նախարար ձեւվեթ բաշայի վրայ: ձեւվեթ բաշա Ապօղոսեանց, բայց լաւագոյն մասին—կողմն է, Վանայ բանտարկելոց արձակումն ինքն ըրած է:

Պոլսոյ մէջ առ այժմ ոչինչ ունինք նոր: Միայն սա կայ որ Մեքլիսեղէկ սրբազան հեռագիր մը խմբած է Կայսերական Պալատն առ Սուլթանն շնորհաւորելով նորա գահակալութեան տարեդարձը: Իսկ Սուլթանի կողմանէ նորա քարտուղարը պատասխանած է սրբազանին:

Թէպէտ, հեռագրական այս փոխանակութիւնը կատարուած է օգոստոս 19-ին, բայց այսօր կը հրատարակուի լրագրաց մէջ:

Նորութիւն մ'է այս գործը: Կերէի թէ Պոլսոյ Պատրիարքը ընդհանուր թուրքիոյ Հայոց ներկայացուցիչը չէ և երբ բարեմադրութեան կերթայ կայսեր յանուն բոլոր թուրքիոյ Հայոց չէ: Առանձին առաջնորդ մը կայայտ հետ յորաբերութեան մտնել բնաւ պատճառ մը չունի: Բայց թուի թէ Մեքլիսեղէկ սրբազանի խորհրդականք կը պատրաստեն նորա ապագայ պատրիարքութիւնը, և այդ հեռագրական յարաբերութիւններն առաջին քայլերն են:

Իրաւ է որ Սահմանադրութիւն կը հակառակի Մեքլիսեղէկ սրբազանի պատրիարքութեան—եթէ երբեք սրբազանն ունի պատրիարքանալու փափաք—բայց երբ Աղբ, Ժողովը ու Բ. Գուռը համաձայնին, խնդիրը կը դիւրանայ: Աւելորդ է պատահականութեան մը վրա երկար խօսել: Մեքլիսեղէկ սրբազանի ինչ լինելը կատարելապէս լաւ չեն գիտեր ինչպէս շատերը: Վերջին դէպքերը գահացուցիչ տպաւորութիւն չը թողին մեր վրայ: Կը փախազէինք աւելի տարբեր ընթացք մը տեսնել: Բայց մարդ սխալական է:

Մեքլիսեղէկ սրբազանն ունի Պոլսի անհաշտ թշնամիներ որք ոչ թէ սկզբունքի մը համար թշնամի են կամ թէ պարագայից բերմամբ սխալ հակացողութեան մը պատճառաւ, այլ զուտ անձնական թշնամի են անարդ և զոհած տեսակետներով: Այս մարդիկը որք դժբաղդաբար ազգային գործիչներ են, եթէ համադրուած իսկ լինին որ Մեքլիսեղէկ սրբազան կրնայ թուրքիոյ Հայոց օգտակար ծառայութիւններ մատուցանել դարձեալ պիտի հակառակին սրբազանին: Այդ անձներն շատերը, սրբազանին այդ թշնամիներն քարոյական այնքան արժէք ունին, որքան սրբա-

զանին բարեկամներէն շատերը: Երկու խումբն ալ իրար կարծին:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսի թէ եւրոպական լեզուներով հրատարակվող և թէ այնտեղի հայոց լրագիրները միաձայն յայտնում են հետեւեալ միտքը: «Բովանդակ Եւրոպա Բօլգարիայի Ալեքսանդր իշխանի անխման մէջ տեսնում է ոչ թէ պարզապէս բոլորական խնդրի փակումն, այլ վերաբացումն բուն իսկ արեւելեան խնդրի, որի մասերից մինն է միայն բոլգարական խնդիրը: Խօսք կայ Բերլինի դաշնագրի վերաբնեւում, և այն ժամանակ անշուշտ նոր անօրինութիւններ պէտք է լինեն մինչև այժմ չը լուծված խնդիրների համար, որոնց մի մասը թերեւ իբրեւ բոլորովին անլուծելի պիտի հանվի դաշնագրից, իսկ միւս մասի լուծումն աւելի ստոյգ միջոցներով պիտի երաշխաւորվի: Եթէ խնդիրը մինչև այդտեղ կը կարողանայ հասցնել Ռուսաստանը, նա մի նոր և ամենաուրեշ յաղթանակ տարած կը լինի, որովհետև ուսուլթիւրքաց պատերազմից ի վեր, Ռուսաստանի ազդեցութիւնը երբեք աւելի հզօր չէր եղած Եւրոպայում, քան այժմ:»

—Աւստրո-Ունգարիայի խօսերայի մասին սեպտեմբերի 3-ից հեռագրում են հետեւեալը. Բատլուս հիւանդացան 48 մարդ, որոնցից 8 մահան: Հիւանդացան 26 զինուորականներ, որոնցից միայն 15-ը առողջացան: Խօսերայի առաջն առնող յանձնաժողովները անընդհատ նիստ են գումարում: Գեղինֆէկցիան պարտաւորեցուցիչ է դարձրած: Հիւանդանում են զլուսւորապէս աղքատ դատակարգին պատկանողները: Մինչև այժմ 47 տեղերում երևացել է խօսերա:

—«Standard» խօսելով Անգլիայի արեւելեան քաղաքականութեան մասին, տաւում է հետեւեալը. Անգլիան երբեք չը պէտք է զրկի իր պաշտպանութիւնից Թուրքիային: Սուլթանին միշտ պէտք է ստիպել նայելու դէպի Մեծ-Բրիտանիան:

—Պոլսից գրում են, որ Օլեքսանդրի դքսի ընտրութիւնը, իբրեւ յաջորդ իշխան Ալեքսանդրի, այնտեղ ամենահաւանականն է համարվում:

—Լօնդոնից եկած տեղեկութիւններից երևում է, որ այնտեղ հասարակաց կարծիքը պահանջում է կառավարութիւնից վճարական լինել արեւելեան քաղաքականութեան մէջ: Եթեպտոսի և Կիպրոսի վերջնական տիրապետութիւնը անհրաժեշտ են համարում:

—Սեպտեմբերի 8-ից Պոլսից հեռագրում են «Нов. Врем.» լրագրին. Անգլիացիների Տասօ կղզու տիրելը վերջացած բան է համարվում: Ռուսաց զիպլոմատիան յայտարարեց, որ այդ քայլը բացուի է ճանապարհ ամեն տեսակ գրաւումների համար Փոքր-Ասիայում:

—«Matin» լրագրը հաղորդում է, որ Ֆրանսիայում լրտեսութեան օրէնքը ընդունելուց յետոյ, Բիսմարկ պատրաստեց մի յայտագիր Ֆրանսիական կառավարութեան անուանով: Թայտագիրը այնպէս խիստ էր գրված, որ անկասկած երկու երկրների մէջ նոր խռովութեան դուռ կը բացանէր: Բայց կայսրը պատուեց այդ յայտագիրը:

—Անգլիացիների Եթիպոսոք գրաւելու լուրերի տարածվելուց յետոյ, Բ. Գրան և Մուլմար-փաշայի մէջ սկսված են զաղտնի յարաբերութիւններ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆՑ

ՍՊԱԼԱ, 15 սեպտեմբերի: (Թղթակցութիւն «Правит. Вѣст.»): Երէկ առաւօտ եկան պստեղ վարչապալի նահանգի Սֆէրիկից, Լօվիչի և Բելոնի գաւառների սկզբնական դպրոցների աշակերտներից և աշակերտութիւններից 250 գիւղացի երեխաներ, իրանց ուսուցիչներ, ուսուցչուհիների և վարչական ուրիշ անձանց հետ Երեւաքը, որոնք կազմում էին երեցեկ խումբ, և որոնց սովորեցրել են տարրական դպրոցների ուսուցիչները և ուսուցչուհիները, հազել էին տօն օրվայ իրանց ազգային շորերը: Որտեղական տան մօտ հասած ժամանակը, երեխաներին հիւրասիրեցին թէյով, քաղցրեղեններով և մրգերով: Կէսօրին երեխայական երգեցիկ խումբը տեղաւորվեցաւ որտեղական տան գլխաւոր մուտքի զինաց: Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին, Մեծ Իշխաններ, Սարգիս-Արտեմիդի գլուխի և սվիտայի անդամների հետ դուրս եկան երեխաների

մօտ, որոնք ողջնանցին Նոյա Մեծութիւններին ազգային հիմնով. այդ միջոցին Նորին Մեծութեան թագուհուն ներկայացրին ծաղկեայ փունջ, և Նոյա Մեծութիւններին երեսօրիչ և երգեցողութեան տպած ծրարները Ապա երեխաների երգեցիկ խումբը երգեց՝ «Слався, Слався», մի կտոր «Рогнеда» օպերայից, և 15 ուսուցիչ ժողովրդական երգեր: Նոյա Մեծութիւնները բարեհաճեցին գովել երգեցողութիւնը, և արժանացրին հարցմունքներով, ինչպէս սովորեցնողներին, այնպէս էլ սովորողներին: Երեխայքը ազատ կերպով պատասխանում էին ուսուցիչ լեզուով: Մի և նոյն ժամանակ թագուհու կողքից արժանացրեց հարցմունքներով Ժերարդի գործարանի նուագախմբի կառավարչին, որը եկել էր երեխաների հետ երգեցողութեանը մասնակցելու համար: Երգեցողութիւնը վերջացաւ ժողովրդական հիմնով, որին յաջորդեցին երեխաների և ներկայ եղող ժողովրդեան ողջունող աղմուկները: Գրանից յետոյ Տոմաշևիկ երգեցիկներին խումբը երգեց մի քանի երգեր, գերմաներէն լեզուով, և մէկն էլ՝ «Коль Славенъ», ուսուցիչ լեզուով: Երգի վերջանալուց յետոյ Նոյա Մեծութիւնները շնորհակալութիւն յայտնեցին. երգիչներին և նրանցից մի քանիսին արժանացրին խօսակցութեան: Գրանից յետոյ գիւղացի երեխաները՝ Ժերարդի գործարանի բանաւորներին նուագախմբի անկողն ժամանակ՝ պարեցին իրանց ազգային պարերը: Կէսօրից յետոյ, ժամը 3-ին, Նոյա Մեծութիւնները ողորմածաբար հրաժարական բարեւ տալով երեխաներին, մասնաորոգական տունը: Այդ միջոցին նուագախմբում բոլորը հնչեցնում էր ազգային հիմն և գոչում էին «ուրա»:

ՍՕՖԻԱ, 15 սեպտեմբերի: Երէկ այստեղ հասած գնեկաւ կառավարման պաշտօնական կերպով գնահատեցին միայն պրեքնիկտը և իւր քարտուղարը: Գնեկաւ կառավարս իր առաջը դուրս եկած մարդոց ասաց, որ Ռուսաստանը կամենում է, որ կուսակցութիւնները միաբանվին, և որ դժբանցից ոչ մէկը չը ճնշվէր միմեկի: Ստամբուլով յարաբերութիւններին մէջ է մտել Յանկովի կուսակցութեան հետ, որպէս զի միասին գործելու պայման կապի: Ստամբուլով մտադիր է ուղարկել կառավարի մօտ մի պատգամաւորութիւն բոլոր կուսակցութիւններին կողմից, յայտնելու, որ Բոլշարիան կամենում է պահպանել իր անկախութիւնը, և կառավարվել դոյուքի ռանցից օրէնքներով, մինչև նոր իշխանի ընտրութիւնը:

ՎԻԵՆԱ, 15 սեպտեմբերի: Վերջին օրը Ֆիւմին Բարի մէջ հիւանդացան խօսկրայով միայն մի-մի մարդ. մահուան գէպերը այնտեղ այլ ևս չեն եղել: Պէշտի մէջ խօսկրայ միսում է նախկին գրութեան մէջ:

ՕԴԵՍՍԱ, 15 սեպտեմբերի: Գնեկաւ-հասանա-գապետը կարելի համարեց՝ արգելել կարանտիններին փոխաբէն առողջապահական հետապետութիւններ հաստատել արտասահմանի հետ յարաբերութիւն ունեցող անդերում: Այդպիսի հետապետութեան համար նշանակված են 11 տեղերի համար բժիշկ բակտերիօլոգներ, որոնք պատրաստվել են Օդեսայի՝ պրօֆէսոր Միչնիկովի պատուաւորող կայարանում:

ՍՕՖԻԱ, 15 սեպտեմբերի: Խնամակալութեան կուսակցութիւնը դիմեց իր կողմնակիցներին մի պրօկլամացիայով, որով հրաւիրում են աջակցել ներկայ կառավարութեանը պատգամաւորներ ընտրելու: Ձինուորական կուսակցութեան մէջ ծագած չփոթութիւնները մասնաւոր կամ ընդհանուր խառնակութիւն առաջ բերել են սպառնում: Հարկերը հաւաքելիս տեղի են ունենում ընդդիմադրութիւններ: Կառավարութիւնը Բելգիայում 15 միլիօն փոխառութիւն է ուղղում տնեւ՝ Յարիբորգ-Վալարիկ երկաթուղու ապահովութեամբ:

ԼՕՆԻՍՆ, 16 սեպտեմբերի: «Times» ասում է, որ ոչ մի պետութիւն չի խառնվի գործի մէջ, որպէս զի խանգարի Բոլշարիայի նոր ուսանալուն, որը այժմ կատարվում է արագ և խաղաղ կերպով: Եթէ Ռուսաստանին յաջողվի հաստատուող զինվ. Գունայից հարաւ, ասում է յիշեալ լրագիրը, այդ դէպքում Թիւրքիան այդ բանը պէտք է վերադրի իրան, և ոչ թէ մի ուրիշ պետութեան. Թիւրքիան միշտ հրաժարվել է իր վրա առնելու Բալկանեան պետութիւնների գլխաւոր կազմակերպողի դերը. այդ դերը այժմ յանձն է առել Ռուսաստանը, ի հարկէ, իր շահերի համար: Ուրիշ ազգերի համար շատ դժուար է խառնվել գործի մէջ, եթէ մինչև անգամ նոքա այդ կամե-

նային: Եւրօպան ուրիշ կերպ գործել չէ կարող, հէնց այն հիման վրա, որ Թիւրքիային չէ կարելի աջակցել այնքան, որ նա կարողանար մի արգելք լինել ուսուց արշաւանքի դէմ:

ՍՕՖԻԱ, 16 սեպտեմբերի: Բարոն Կառլաւարս ներկայացրեց Բոլշարիայի ուսուցիչ կառավարութեան պահանջը, աւելացնելով, որ այդ պահանջների չիւրագործելը դժգոհութիւն կը սլառ՝ ճառի թագաւոր-կայսրին: Բոլշարիայի խորհուրդը կապմը այդ պահանջները քննելու համար: Կառլաւարս յայտարարեց, որ ներկայ դրութեան մէջ ազգային մեծ ժողովի գումարումը աւելորդ է լինի, և նրա վերջը չի ունենայ Ռուսաստանի համար նշանակութիւն: Կառլաւարս խորհուրդը առեց վերջին պաշարման դրութիւնը: Բոլշարիայի կառավարութիւնը ազգային ժողովի գումարման և իշխանի ընտրութեան յետաձգութիւնը անկարելի է գտնում, և յետապնդում է մասնակցողներին ազատուող խոյս է տալիս:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 17-ին

Ռուսաց 1 րօպլ 1 ծնդոնի վրա արծէ	235/32	պէնու.
— — — — —	1965/8	պֆ.
— — — — —	244	սան.
Ռակի — — — — —	8 ր. 52 ր.	
Մարտային կուսակցութիւնը	165	1/4
Արմաթ — — — — —	1	31
Բորային դիմաւորներ	41/4	60/0
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	100	25 ր.
— — — — —	2-րդ	100
— — — — —	3-րդ	100
— — — — —	4-րդ	99
— — — — —	5-րդ	99
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99	62
— — — — —	2-րդ	99
— — — — —	3-րդ	99
Ներքին 5% առաջին փոխառութ.	240	—
— — — — —	225	25
5 1/2% ընդհանուր	104	75
Ռակիայ ընդհանուր	185	25
Նոր կոմսիօնից փոխառութիւն	158	—
50% գրաւական թղթեր կալուած.		
— — — — —	160	62
5 1/2% գրաւական թղթեր խրատի կալուած. բանկ.	96	75
60% գրաւակ. թղ. խրատի կալ. բան.	101	50
— — — — —	101	75
— — — — —	101	50
— — — — —	102	50
— — — — —	102	50
— — — — —	101	—
— — — — —	101	—
— — — — —	101	—
— — — — —	27 և 43	97
— — — — —	18 և 43	97
Վալախո-Կալմուկ բանկի ակցիաները	580	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընդ.	259	75
Ռիբնիսկ-Վոլոգդի ընդ.	98	25
Ս. Պետերբուրգի քաղաքային օրէնքադատար.	95	12
— — — — —	95	75
— — — — —	94	12
— — — — —	99	25
— — — — —	88	75
Պետական բանկի 6% հրատարակ-կութեան տոմսեր	99	62
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը հանդարտ է:		

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԵՆԻՍՍԱՎԵՏՊՈԼ. Յ. Հ. Չեք, ուղարկած 50 րօպլ. ին Բելախեանց վարժապետի անունով, յանձնեցինք իրան վարժապետին: Շատ շնորհակալութիւն է յայտնում ձեզ:

ԲԱՐՈՒ. Ա. Ա. Խնդրում ենք ուղարկեցէք ձեր թարգմանութիւնը: Այդ վէպիկը մենք չենք ճանաչում: Բարեհաճեցէք ուղարկել. կը կարգանք: Ինչ որ վերաբերում է ձեր առաջարկութեանը նուրբի մեղ վիկտորի. Հիւգօի ձեր թարգմանութիւնը, դրանով թէ և մեղ շատ մեծ պատիւ էք անում, բայց այդ բանը մենք չենք կարող ընդունել: Եթէ դուք ինքնիք մի բան գրելէք ու մեղ նուրբի, մի խօսքով եթէ դա ձեր սիրական ստեղծագործութիւնը լինէր, մենք մեծ ուրախութեամբ ու շնորհակալութեամբ կընդունէինք ձեր նուէրը:

ԲԱՐՈՒՄ. Աղա՛մ Երկանօյ! Թէ և յայտնեցինք ձեզ, որ բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեան չունի իր բրօշխանից աւելորդ օրինակներ, բայց այժմ բժշկապետը, կարգաւոր մեղ խմբագրական պատասխանները, ուղարկեց մեղ իր յիշված բրօշխանից մի օրինակ ձեզ հասցնելու համար: Ուղարկեցինք ձեզ փոստով այդ բրօշխանը:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍՈՒՐԻ-ԽԱՉ քաղաքի հայոց օրիորդաց ուսումնարարի համար հարկաւոր է ՄԻ ՎԱՐՈՒՆԻ: Յանկացողները պայմանների համար պէտք է դիմեն «Մշակի» խմբագրութեանը: 1—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ: Հինգշաբթի, 18 սեպտեմբերի, ԲԱՐՈՒՄԻՅ դուրս կը գնայ շոգենաւ LE DONAI (ԳՕ-ՆԵՅ) նաւապետ ՄԻՐԱՅԷ (SIBILET) մոնելով Կիրասունդ, Տրապիզոն, Սամսոն, Ենեքօլի, Կ. Պօլիս և Զմիւռնիա և յարակցելով Եւֆրատ, Պորտ-Սէյիդ և Ալեքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ:
Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱՐՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԲՈՒՐ-ԿԱՐՈՒՆ և ԸՆԿ. ԽԱՉ ԹԻՖԼԻՍԻՄ ԳԵՐՈՒ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՏԻՆ: 2—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՒԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Չորեքշաբթի, հոկտեմբերի 18-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէյը: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնի և Թիֆլիսում պ. Բէտին, նախկին Արծունի գալլերէում, № 103. 1—4

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Յ Հ Ա Մ Ա Ր
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ:
Աւանդելի առակայք սղաւ են՝ 1) Առևտրական հնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համարելի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) Գեղագրութիւն:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները օգոստոսի 25-ից, ամենայն օր, երեկոյեան 5-ից, մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում՝ Սոլուկուում, Լաբօրատորիայի փողոցի վերայ, Յոլհաննէս Գորդանեանի տանը, № 11: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Ծովանդեանի բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաբաղադրացիք դիմում են կուրսերի հիմնողին՝
вѣ Тифлисѣ, С. П. Мануэльянцу.
15—15

ԵՐԿՈՒ ԱՄՈՒՄԻՆԵՐ, ՈՒՍՈՒՑԻՑ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՆԻ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՆ ՊԱՇՏՈՆ ՍՏԱՆԱԼ հայոց զարդաներում, 700 ԲՈՒՐԼԻ ՌՈՃԻԿՈՎ: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը: 2—3

ԲԵԱԼԱԿԱՆ զարդերում աւարտած ՈՒՍԱՆՈՂ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՒ ԹԻՖԼԻՍԻ ընտանիքներում ԳԱՍԵՐ ունենալ: Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը: 3—5

Պատկերադարձ ԳԱՍԱԳԻՐԳԻՆԻՔՆԱՌՍՈՒՑԻՑ ԲՈՒՍԱՑ ԼԵՋՈՒԻ Լ. Խան-Աղեանցի. գրավաճառների մօտ 20 կօպէկ: 12—24 (Հ.)

ԱՉԲԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆ ունեցողների ընդունելութիւնը ԲԺԻՇԿ ԲԵՅԻՄ ՄՕՏ վերանորոգված է: Ստարո-Արսենաւայա փողոց տ. № 17: Ամենայն օր, առաւօտեան 9—10 ժամը: 3—4

ՇԱՄԲՈՐԵՑՈՑ ԵՆԿԱՑՈՒ Նորաշէն շինութեան մէջ, Տափի թաղի եկեղեցին ԲԱՑ ԵՒ ԱՆՈՒՄ ԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ: Ընդունելութիւնները սկսվում են, երեքշաբթի, սեպտեմբերի 2-ից: 3—3

Բարձրագոյն հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ Ս. Նշան եկեղեցու օրիորդաց ուսումնարանը սեպտեմբերի 15-ին բացվում է և այդ օրից առաւօտեան 10 ժամից մինչև ժամի մէկը կը լինի աշակերտութիւնների ընդունելութիւնը: 2—3

Պարսկաստանի Ռաշա քաղաքի հայոց ընթերցարանի վարչութիւնը խնարհաբար խնդրում է հեղինակներին, թարգմանիչներին և ուրիշ մասնաւոր անձանց՝ նպատակաւոր կարգադրանքին, ուղարկելով մի կամ մի քանի օրինակ իրանց հեղինակութեանը, թարգմանութիւններից, և առհասարակ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներով գրել: Գրքերը պէտք է ուղարկել հետևեալ հասցեով. Баку, Г-ну Григорію Дильдарову. (Ռաշաի գրադարանի համար): 6—6